

**ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ**

Տ Ա Ր Ե Վ Ա Ն Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**Հայաստանի Հանրապետությունում փողերի լվացման և
ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում
2012թ. գործունեության վերաբերյալ**

ԵՐԵՎԱՆ, 2013թ.



Բովանդակություն

Նախաբան	3
1. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրական կարգավորումն ու զարգացումները	4
2. ՓԼ/ԱՖ ոլորտում իրականացված ուսումնասիրությունները և վերլուծությունները, դրանց արդյունքները	4
3. Տեղեկատվության հավաքագրումը և ՖԴԿ տվյալների շտեմարանը.....	7
4. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության խախտումները, կիրառված պատասխանատվության միջոցները	7
5. Միջազգային համագործակցությունը	9
6. Ուսուցում, խորհրդատվություն և տեխնիկական օժանդակություն	13
Հավելվածներ.....	17



Նախաբան

Սույն հաշվետվությամբ ներկայացվում են 2012թ. ընթացքում Հայաստանի Հանրապետությունում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (այսուհետ՝ ՓԼ/ԱՖ) դեմ պայքարի ոլորտում իրականացված աշխատանքները և դրանց արդյունքները:

Հայաստանի Հանրապետությունում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի կատարելագործման և այն միջազգային պրակտիկայում կիրառելի չափանիշներին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ 2012թ. շարունակվել են Հայաստանի Հանրապետությունում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի 2010-2013թթ. ազգային ռազմավարությամբ նախանշված նպատակների իրագործմանն ուղղված աշխատանքները: Մասնավորապես, աշխատանքներ են կատարվել ՖԱԹՖ-ի հանձնարարականներին համապատասխանող օրենսդրության ներդրման, միջազգային և ներպետական համագործակցության ամրապնդման, հաշվետվություն տրամադրող անձանց աշխատակիցների՝ ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում գիտելիքների զարգացման, ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի (այսուհետ՝ ՖԴԿ) և ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգում ներառված այլ մարմինների աշխատակիցների վերապատրաստման ուղղությամբ:

2012թ. Եվրախորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի 40-րդ լիազումար նիստի ընթացքում հաստատվել է ՀՀ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համակարգի երրորդ փուլի գնահատման երկրորդ Առաջընթացի հաշվետվությունը¹:

Հաշվետու տարում ՖԴԿ-ի կողմից մշակվել է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի 2013-2015 թթ. ազգային ռազմավարությունը»², որը հաստատվել է «Հայաստանի Հանրապետությունում դրամանենգության, պլաստիկ քարտերի և այլ վճարային գործիքների բնագավառում զեղծարարության, փողերի լվացման, ինչպես նաև ահաբեկչության ֆինանսավորման դեմ տարվող պայքարի հարցերով» միջգերատեսչական հանձնաժողովի նիստում:

¹ Տե՛ս «Միջազգային համագործակցությունը» վերտառությամբ բաժին 5-ը

² Տե՛ս հետևյալ հղմամբ՝

[http://www.cba.am/Storage/AM/downloads/FDK/Strategy/AML_CFT_Strategy\(2013_2015\)_Arm.pdf](http://www.cba.am/Storage/AM/downloads/FDK/Strategy/AML_CFT_Strategy(2013_2015)_Arm.pdf)



1. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրական կարգավորումն ու զարգացումները

2012թ. շարունակվել են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության զարգացմանն ուղղված աշխատանքները: ՓԼ/ԱՖ դեմ պայքարի անհրաժեշտ մեխանիզմների կատարելագործման, ինչպես նաև միջազգային չափանիշներին համապատասխանող օրենսդրության ներդրմանն ուղղված աշխատանքների շրջանակներում դեռևս 2010 թվականին ՖԴԿ-ի կողմից այլ իրավասու մարմինների աջակցությամբ մշակված «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում և 14 այլ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծերի վերաբերյալ քննարկում է տեղի ունեցել ՀՀ կառավարությունում: Քննարկման արդյունքում որոշվել է նշված նախագծերը կրկին ուղարկել շահագրգիռ գերատեսչություններին և մարմիններին՝ ներկայացնելու իրենց դիրքորոշումը այդ նախագծերի վերաբերյալ ներկայացված սկզբունքային առաջարկությունների և դիտողությունների չընդունման կամ մասնակի ընդունման վերաբերյալ: Ներկայացված դիրքորոշումներն ամփոփվելուց հետո նախագծերը կրկին ներկայացվել են ՀՀ կառավարություն՝ օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու նպատակով: ՀՀ կառավարության կողմից ուղարկված վերջնական առաջարկությունների և դիտողությունների հիման վրա օրենսդրական փաթեթը լրամշակվել է, որից հետո այն հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով՝ ընդունման:

2012թ. ընդունվել են «Կեղծ և շինծու գործարքների (պայմանագրերի) միջոցով փողերի լվացումը» վերտառությամբ 11-րդ և «Կանխավճարային քարտերի միջոցով փողերի լվացումը» վերտառությամբ 12-րդ տիպաբանությունները, ինչպես նաև փոփոխություններ և լրացումներ են կատարվել մի շարք իրավական ակտերում:

2. ՓԼ/ԱՖ ոլորտում իրականացված ուսումնասիրությունները և վերլուծությունները, դրանց արդյունքները

ՖԴԿ-ն, որպես փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարը համակարգող ազգային մարմին, իր իրավասությունների իրականացման նպատակով ստանում և վերլուծում է ՓԼ/ԱՖ հնարավոր դեպքերի վերաբերյալ առաջնային ազդակներ, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքերում և կարգով վերլուծության արդյունքները տրամադրում է համապատասխան ներպետական և օտարերկրյա գործընկերներին:

Ստացվող տեղեկատվության աղբյուր են հաշվետու անձինք, տեղական և օտարերկրյա գործընկերները, ինչպես նաև ԶԼՄ-ները և այլ մարմինները: Տեղեկատվության կարևոր աղբյուր են հատկապես իրավապահ մարմինները, որոնցից ՖԴԿ-ն խնդրարկում է



իր գործառույթներն իրականացնելու համար անհրաժեշտ տեղեկատվություն: Բացի այդ, իրավապահ մարմինների հետ համագործակցության շրջանակներում ՖԴԿ-ն իրավապահ մարմիններից ստանում է հարցումներ, որոնց հիման վրա իրականացնում է վերլուծություններ: Ինչպես ցույց են տալիս վիճակագրական տվյալները, 2012թ. իրավապահ մարմինների կողմից կատարվել է թվով 61 հարցում, իսկ ՖԴԿ-ի կողմից իրավապահ մարմիններին՝ թվով 11 հարցում (տե՛ս Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

	2010 թ.	2011 թ.	2012 թ.	Ընդամենը
ՖԴԿ կողմից հաղորդումներ իրավապահ մարմիններին	23	17	11	51
ՖԴԿ կողմից իրավապահ մարմիններից խնդրարկված տեղեկատվություն	15	33	11	59
Իրավապահ մարմինների կողմից ՖԴԿ-ից խնդրարկված տեղեկատվություն	53	58	61	172

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգում տեղեկատվության փոխանակման առումով կարևորվում է նաև օտարերկրյա գործընկերների հետ համագործակցությունը: Այսպես, 2012թ. ընթացքում ՖԴԿ կողմից օտարերկրյա ՖՀՄ-ներին կատարվել է թվով 38 հարցում, իսկ օտարերկրյա ՖՀՄ-ներից ստացվել է թվով 11 հարցում (տե՛ս Աղյուսակ 2):

Աղյուսակ 2

	2010թ.	2011թ.	2012թ.	Ընդամենը
ՖԴԿ-ին ուղղված հարցումներ օտարերկրյա ՖՀՄ-երից	25	36	11	72
ՖԴԿ-ի կողմից կատարված հարցումներ օտարերկրյա ՖՀՄ-երին	28	30	38	96

Ինչ վերաբերում է ՖԴԿ կողմից իրականացված վերլուծությունների արդյունքներին, հարկ է նշել, որ հաշվետու տարվա ընթացքում իրականացված վերլուծությունների հիման վրա ՖԴԿ կողմից իրավապահ մարմիններին է ուղարկվել 11 հաղորդում՝ համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու նպատակով (տե՛ս Աղյուսակ 1):



2012թ. վերլուծված գործերում և հարուցված քրեական գործերում փողերի լվացմանը հիմնականում նախորդել են հետևյալ արարքները.

- յուրացնելը կամ վատնելը
- գողությունը
- կեղծ վճարային փաստաթղթեր պատրաստելը կամ իրացնելը
- համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ կատարված հափշտակությունը
- խարդախությունը
- առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելը:

Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելու համար 2012թ. ընթացքում կայացվել է 2 մեղադրական դատավճիռ (տե՛ս Աղյուսակ 3), որոնցով դատապարտվել է 2 անձ: Դատավճիռներ կայացվել են համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ կատարված հափշտակության, խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու, գողության և դրանց արդյունքում ստացված գումարների օրինականացման համար առաջադրված մեղադրանքներով:

Աղյուսակ 3

	2010 թ.	2011 թ.	2012 թ.	Ընդամենը
Հարուցված քրեական գործեր	13	10	9	32
Կայացված դատավճիռներ	3	5	2	10

2012թ. ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ կասեցված միջոցների ընդհանուր գումարը կազմել է 23.003.274 ՀՀ դրամ, իսկ կայացված մեղադրական դատավճիռներով բռնագրավման ենթակա գումարը՝ 12.220.947 ՀՀ դրամ (տե՛ս Աղյուսակ 4):

Աղյուսակ 4

	ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ կասեցված գործարքներում և գործարար հարաբերություններում ներգրավված միջոցներ	Բռնագրավման ենթակա գումարներ ³
2010 թ.	345.000 ՀՀ դրամ, 290.000 ԱՄՆ դոլար	514.026.500 ՀՀ դրամ
2011 թ.	0	415.517.535 ՀՀ դրամ

³ Բացի աղյուսակում նշված՝ հոգուտ պետական բյուջեի բռնագանձման ենթակա միջոցներից, 2012թ-ին. փողերի լվացման հիմքով կայացված դատավճիռների համաձայն, հոգուտ երրորդ անձի բավարարվել է ևս 83.535.019 ՀՀ դրամի բռնագանձման պահանջ:




2012 թ.	23.003.274 ՀՀ դրամ	12.220.947 ՀՀ դրամ
Ընդամենը	23.348.274 ՀՀ դրամ, 290.000 ԱՄՆ դոլար	941.764.982 ՀՀ դրամ

3. Տեղեկատվության հավաքագրումը և ՖԴԿ տվյալների շտեմարանը

2012թ. ՖԴԿ տեղեկատվական շտեմարանը համալրվել է շուրջ 171.000 պարտադիր տեղեկացման ենթակա և կասկածելի գործարքների վերաբերյալ հաշվետվություններով (տե՛ս Հավելված 1): Հաշվետու ժամանակաշրջանի ավարտին տվյալների շտեմարանում առկա հաշվետվությունների թիվը կազմել է շուրջ 790.000: 2008-2012 թթ. ընթացքում ստացված հաշվետվությունների քանակի աճողական դինամիկան ներկայացված է ստորև:

Պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքների վերաբերյալ 2008-2012 թթ. հաշվետվությունների քանակի աճողական դինամիկա



4. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության խախտումները, կիրառված պատասխանատվության միջոցները

2012թ.-ի ընթացքում ֆինանսական և ոչ ֆինանսական հաստատություն հանդիսացող հաշվետվություն տրամադրող անձանց կողմից ՓԼ/ԱՖ դեմ պայքարի



օրենսդրության պատշաճ կիրառման նկատմամբ իրականացված վերահսկողության շրջանակներում բացահայտվել են մի շարք խախտումներ, որոնց համապատասխան կիրառվել են պատասխանատվության միջոցներ:

Այսպես, ֆինանսական հաստատությունների նկատմամբ իրականացվող հեռակա վերահսկողության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Ֆինանսական վերահսկողության վարչության հետ համատեղ իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերվել են ժամկետանց հաշվետվություններ և անարժանահավատ տեղեկատվություն տրամադրելու դեպքեր, իրավական ակտերի պահանջների ոչ պատշաճ կատարման դեպքեր, որոնց հիման վրա ֆինանսական հաստատություններին ուղարկվել են տեղեկացումներ, ինչպես նաև նրանց նկատմամբ կիրառվել են հետևյալ պատասխանատվության միջոցները.

Աղյուսակ 5

2012թ. ֆինանսական հաստատություններին ուղարկված տեղեկացումները և նրանց նկատմամբ կիրառված պատասխանատվության միջոցները	
Բանկեր	<ul style="list-style-type: none"> ✓ 4 բանկի կողմից թույլ է տրվել թվով 36 խախտում. <ul style="list-style-type: none"> • թվով 14 խախտման դեպքում կիրառվել են նախազգուշացումներ, • թվով 10 խախտման դեպքում կիրառվել է տուգանք 400.000 ՀՀ դրամի չափով, • թվով 12 խախտման դեպքում կիրառվել է նախազգուշացում և տուգանք՝ 200.000 ՀՀ դրամի չափով. ✓ Ոչ էական խախտումների համար թվով 4 բանկի ուղարկվել են տեղեկացումներ
Վարկային կազմակերպություններ	<ul style="list-style-type: none"> ✓ 6 ընկերության կողմից թույլ է տրվել 18 խախտում. <ul style="list-style-type: none"> • թվով 1 խախտման դեպքում կիրառվել է նախազգուշացում, • թվով 17 խախտման դեպքում կիրառվել է տուգանք 300.000 ՀՀ դրամի չափով,
Ապահովագրական ընկերություններ	<ul style="list-style-type: none"> ✓ 4 ընկերության կողմից թույլ տրված 14 խախտման դեպքում կիրառվել են նախազգուշացումներ ✓ Ոչ էական խախտումների համար թվով 3 ընկերության ուղարկվել են տեղեկացումներ
Փոխանակման կետեր	<ul style="list-style-type: none"> ✓ 4 ընկերության կողմից թույլ տրված 4 խախտումից 2-ի դեպքում կիրառվել են նախազգուշացումներ⁴

⁴ Մյուս 2-ը հաշվետվության կազմման պահին քննարկման փուլում են:



Բացի այդ, տեղերում ստուգումների արդյունքում ՖԴԿ աշխատակիցները օժանդակել են ֆինանսական կազմակերպությունների ՓԼ/ԱՖ կանխարգելման ներքին համակարգի դիտանցման աշխատանքներին:

Ինչ վերաբերում է ոչ ֆինանսական հաստատություններին, պետք է նշել, որ 2012թ.-ին պատասխանատվության միջոցներ են կիրառվել միայն շահումով խաղ, վիճակախաղ և խաղատուն կազմակերպող անձանց նկատմամբ: Ոչ ֆինանսական հաստատությունները և նրանց նկատմամբ կիրառված պատասխանատվության միջոցները ներկայացված են ստորև նշված աղյուսակում:

Աղյուսակ 6

Ոչ ֆինանսական հաստատություն	Պատասխանատվության միջոցներ
Շահումով խաղ կազմակերպող անձ	37 անձի նկատմամբ կիրառվել է թվով 37 նախազգուշացում և 1 տուգանք՝ 800.000 ՀՀ դրամի չափով
Խաղատուն կազմակերպող անձ	6 անձի նկատմամբ կիրառվել է թվով 6 նախազգուշացում և 2 տուգանք՝ ընդհանուր 1.000.000 ՀՀ դրամի չափով
Վիճակախաղ կազմակերպող անձ	1 անձի նկատմամբ կիրառվել է 1 նախազգուշացում

5. Միջազգային համագործակցությունը

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են միջազգային գործընկերների հետ արդեն իսկ ձևավորված հարաբերությունները՝ ներգրավվելով միջազգային փաստաթղթերի լրամշակման աշխատանքներում, ինչպես նաև այլ միջազգային նախաձեռնություններում:

Ձեռնարկվել են գործողություններ, որոնք ուղղված են միջազգային կառույցների կողմից կիրառվող սահմանափակումների վերաբերյալ պահանջների կատարմանը: Այսպես, ՖԴԿ ինտերնետային կայքում հրապարակվել և հաշվետու անձանց իրազեկվել են.

- ՖԱԹՖ-ի՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգում ռազմավարական բացեր ունեցող երկրների վերաբերյալ հայտարարությունները,
- Այն երկրների ցանկը, որոնք ՖԱԹՖ-ի ՓԼ/ԱՖ չափանիշներին համապատասխանության ընթացիկ դիտանցման շրջանակներում որակվել են որպես ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի ռազմավարական բացեր ունեցող և դրանք վերացնելու նպատակով ՖԱԹՖ-ի հետ համատեղ մշակել են գործողությունների ծրագիր:



2012թ. փետրվարին ՖԱԹՖ հանձնարարականները հաստատվել են նոր խմբագրությամբ, ինչը ներառում է մի շարք փոփոխություններ: Հանձնարարականների՝ նոր խմբագրությամբ փողերի լվացմանը և ահաբեկչության ֆինանսավորմանը վերաբերող դրույթները համալրելով՝ նախատեսվել են նաև զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի վերաբերյալ դրույթներ:

Էզմոնտ խմբի հետ համագործակցությունը

Շարունակվել է Էզմոնտի անվտանգ տեղեկատվական ցանցի միջոցով տեղեկատվություն փոխանակումը օտարերկրյա ՖՀՄ-ների հետ:

ՖԴԿ և ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչության ներկայացուցիչները մասնակցել են Էզմոնտ խմբի աշխատանքային խմբերի հանդիպումներին և 20-րդ լիազումար նիստին:

Օպերացիոնալ հարցերով աշխատանքային խմբի նիստի ընթացքում ամփոփվել է ՖԴԿ կողմից ղեկավարվող «Տեղեկատվության փոխանակման և միջազգային համագործակցության զարգացման» ծրագիրը, որի արդյունքում համապատասխան փոփոխություններ են առաջարկվել Էզմոնտ խմբի՝ վերանայման փուլում գտնվող հիմնադիր փաստաթղթերում: ՖԴԿ-ն ներկայացրել է նոր ծրագիր՝ ուղղված Էզմոնտ խմբի բոլոր անդամ ՖՀՄ-ների համար տեղեկատվության հասանելիության նվազագույն սահմաններ ամրագրելուն:

Ընդլայնման գծով աշխատանքային խմբի շրջանակներում Հայաստանի պատվիրակությունը ներկայացրել է ՖԴԿ կողմից հովանավորվող Տաջիկստանի ՖՀՄ-ի՝ տեղում այցելության վերաբերյալ հաշվետվությունը և Թուրքմենստանի ՖՀՄ-ի կողմից հաշվետու ժամանակահատվածում ձեռնարկված քայլերը: Տաջիկստանի ՖՀՄ-ի վերաբերյալ հաշվետվությունը քննարկվել է նաև իրավական հարցերով աշխատանքային խմբում: Քննարկումների արդյունքում 20-րդ լիազումար նիստի ընթացքում՝ ՖՀՄ ղեկավարների հանդիպման ընթացքում որոշում է կայացվել Տաջիկստանի ՖՀՄ-ին շնորհել անդամի կարգավիճակ:

20-րդ լիազումար նիստի բացման արարողության շրջանակներում ՖԴԿ ղեկավարը ներկայացրել է զեկույց 2011թ. Երևանում կայացած Էզմոնտ խմբի 19-րդ լիազումար նիստի աշխատանքների վերաբերյալ:

ՖԴԿ-ի ներկայացուցիչները ներգրավվել են նաև Էզմոնտ խմբի կողմից իրականացվող հիմնադիր փաստաթղթերի վերանայման ծրագրում և առաջարկներ ներկայացրել նշված փաստաթղթերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:



Եվրախորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի հետ համագործակցության շրջանակներում

ՀՀ պատվիրակությունը մասնակցել է ՄԱՆԻՎԱԼ-ի 38- 40-րդ լիագումար նիստերին: 2012թ.-ին կայացած լիագումար նիստերի ընթացքում քննարկվել են հետևյալ հիմնական հարցերը.

- ՄԱՆԻՎԱԼի անդամ մի շարք երկրների ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի չորրորդ փուլի գնահատման հաշվետվությունները: Հարկ է նշել, որ ՀՀ պատվիրակությունը հանդես է եկել որպես Անդորրայի հաշվետվության իրավապահ հարցերով համազեկուցող երկիր.
- ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի գնահատմանը հաջորդող առաջընթացի հաշվետվությունները.
- Համապատասխանության ընդլայնված գործընթացների շրջանակներում ընդգրկված երկրների կողմից ձեռնարկված քայլերի վերաբերյալ հաշվետվությունը
- :

ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի 40-րդ լիագումար նիստի ընթացքում հաստատվել է ՀՀ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համակարգի երրորդ փուլի գնահատման երկրորդ Առաջընթացի հաշվետվությունը, որն արձանագրում է երկրի առաջընթացը հետևյալ ուղղություններով՝

- Ոլորտը կարգավորող օրենսդրական ակտերի նախագծերն ընդունման դեպքում կապահովեն ահաբեկչության և ահաբեկչության ֆինանսավորման հասկացությունների, ինչպես նաև հաճախորդի պատշաճ ուսումնասիրության ընթացակարգերի համապատասխանությունը միջազգային չափանիշներին
- Վճռաբեկ դատարանի կողմից 2011 թվականին ընդունված որոշումը հնարավոր է դարձնում դատավճիռների կայացումը՝ առանց նախորդող հանցագործության համար նախկինում կամ միաժամանակյա դատավճռի անհրաժեշտության
- Երկիրն արդյունավետորեն համակարգում է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին ՀՀ օրենքով սահմանված ֆինանսական և ոչ ֆինանսական հաստատությունների կողմից հաշվետվությունների տրամադրումը, ինչպես նաև առաջընթաց է արձանագրել ՓԼ հանցակազմով գործերի քննության հարցում:

Հաշվետվությունը նաև անդրադառնում է հաշվետու ժամանակահատվածում 2013-2015թթ.-ի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ազգային ռազմավարության ընդունմանը, հաշվետվություն տրամադրող անձանց, իրավապահ և վերահսկող մարմինների, ինչպես նաև ֆինանսական հետախուզության մարմնի համար կազմակերպված դասընթացներին և համակարգի արդյունավետության բարձրացմանն ուղղված այլ քայլերին:



ՄԱՆԻՎԱԼ-ի 40-րդ լիազումար նիստի ընթացքում Հայաստանը ներկայացրել է նաև երկրում ՓԼ/ԱՖ ռիսկերի ռազմավարական վերլուծության իրականացման իր փորձը:

Բացի այդ 2012թ. ընթացքում ՖԴԿ աշխատակիցները, որպես Եվրախորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի գնահատող խմբի անդամ, մասնակցել են Բուլղարիայի և Խորվաթիայի 4-րդ փուլի գնահատումներին:

Եվրասիական խմբի գործունեության շրջանակներում

ՖԴԿ-ն շարունակել է ակտիվորեն մասնակցել Եվրասիական խմբի նախաձեռնություններին: Այսպես, ՖԴԿ ներկայացուցիչը, որպես Եվրասիական խմբի թիմի անդամ, մասնակցել է Ղրղզստանի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի զարգացմանն ուղղված ծրագրի շրջանակներում փորձագետների՝ Բիշկեկ կատարած այցին:

Հաշվետու ժամանակահատվածում տեղի են ունեցել Եվրասիական խմբի լիազումար նիստեր, որոնց մասնակցել է նաև Հայաստանի պատվիրակությունը:

Օտարերկրյա ֆինանսական հետախուզության մարմիններին տրամադրվող տեխնիկական օժանդակություն

ՖԴԿ-ն հաշվետու ժամանակահատվածի ընթացքում շարունակել է օտարերկրյա ֆինանսական հետախուզության մարմիններին տրամադրել տեխնիկական օժանդակություն: Մասնավորապես, ՖԴԿ են այցելել Ղազախստանի Հանրապետության ֆինանսական հետախուզության մարմնի երկու ներկայացուցիչ՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ՖԴԿ փորձը ուսումնասիրելու նպատակով:

Թուրքմենստանի ֆինանսական հետախուզության մարմնին տրամադրվող տեխնիկական օժանդակության ծրագրի շրջանակներում կազմակերպվել են փոխադարձ այցելություններ: Այցելությունների ընթացքում ներկայացվել են տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտին առնչվող և Էզմոնտ խմբին անդամակցության ընթացակարգերի վերաբերյալ հարցեր:

Այլ

Հաշվետու տարվա մայիսի 23-ից 25-ը Լեհաստանի ֆինանսների նախարարի տեղակալ Անդրեյ Պարաֆյանովիչի գլխավորած պատվիրակությունը Հայաստանի և Լեհաստանի ֆինանսական հետախուզության մարմինների միջև համագործակցության շրջանակներում այցելել է Հայաստան: Այցի ընթացքում ՖԴԿ ներկայացուցիչները Լեհաստանի պատվիրակության անդամներին ներկայացրել են Հայաստանի փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համակարգը:

Հաշվետու տարվա հունիսի 13-ից 15-ը ՖԴԿ ներկայացուցիչը մասնակցել է Վարշավայի կոնվենցիայի համաձայն հիմնադրված Կողմերի Համաժողովի 4-րդ նիստին,



որի ընթացքում վերընտրվել է Համաժողովի բյուրոյի անդամ: Նիստի ընթացքում սահմանվել է Վարչավայի կոնվենցիային համապատասխանության գնահատման նոր հաջորդականություն:

Հաշվետու տարվա սեպտեմբերի 4-ից 7-ը ՖԴԿ ներկայացուցիչը մասնակցել է ՖԱԹՖ-ի աշխատանքային խմբի հանդիպմանը, որի շրջանակներում քննարկվել է ՖԱԹՖ-ի նոր 40 հանձնարարականների արդյունավետության գնահատման մեթոդաբանության նախագիծը:

2012թ.-ի հոկտեմբերի 29-ից 30-ը Փորձի փոխանակման և համագործակցության ընդլայնման նպատակով Ճապոնիայի ՖՀՄ-ի պատվիրակությունը այցելել է Հայաստան, որի ընթացքում երկու երկրների ներկայացուցիչները ներկայացրել են իրենց երկրների փորձը ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում:

ՖԴԿ և օտարերկրյա ՖՀՄ-ների միջև կնքված փոխըմբռնման համաձայնագրեր

Հաշվետու տարում ՖԴԿ-ն փոխըմբռնման հուշագրեր է կնքել մի շարք երկրների ՖՀՄ-ների հետ:

Աղյուսակ 7

Երկիր	ՖՀՄ անվանումը
Ճապոնիա	Ճապոնիայի ազգային հասարակական անվտանգության կոմիտեի ֆինանսական հետախուզության կենտրոն
Կիպրոս	Կիպրոսի Հանրապետության փողերի վճարման դեմ պայքարի մարմին
Խորվաթիա	Խորվաթիայի ֆինանսների նախարարության փողերի վճարման դեմ պայքարի գրասենյակ
Միացյալ Թագավորություն	Միացյալ Թագավորության կազմակերպված հանցավորության գրասենյակի ֆինանսական հետախուզության մարմին

6. Ուսուցում, խորհրդատվություն և տեխնիկական օժանդակություն

6.1. Ուսուցում ՖԴԿ, ԿԲ այլ ստորաբաժանումների և ՓԼ/ԱՖ դեմ պայքարում ներգրավված պեղական մարմինների աշխատակիցների համար



ԹԵՄԱ	ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ	ԱՄՍԱԹԻՎ
<p>Լեհաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարության և Ֆինանսների նախարարության կողմից կազմակերպված դասընթաց «Պայքար ահաբեկչության ֆինանսավորման դեմ» թեմայով</p>	<p>ՓԼ/ԱՖ դեմ պայքարում ներգրավված գերատեսչությունների աշխատակիցներ</p>	<p>հունվարի 31-ից փետրվարի 2-ը</p>
<p>ԵԱՀԿ կողմից կազմակերպված 20-րդ տնտեսական և բնապահպանական ֆորումի առաջին նախապատրաստական հանդիպում՝ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքար» խորագրով</p>	<p>ՓԼ/ԱՖ դեմ պայքարում ներգրավված գերատեսչությունների աշխատակիցներ</p>	<p>փետրվարի 6-ից 7-ը</p>
<p>ԱՄՀ կողմից ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում տրամադրվող տեխնիկական օժանդակության շրջանակներում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի թեմայով դասընթաց</p>	<p>ՓԼ/ԱՖ դեմ պայքարում ներգրավված գերատեսչությունների աշխատակիցներ</p>	<p>մարտի 20-ից 21-ը</p>
<p>ԱՄՀ կողմից կազմակերպված «ՖԱԹՖ-ի վերանայված ստանդարտները» թեմայով դասընթաց</p>	<p>ՓԼ/ԱՖ դեմ պայքարում ներգրավված գերատեսչությունների աշխատակիցներ</p>	<p>ապրիլի 9-ից 13-ը</p>
<p>Նիդեռլանդների բանկի կողմից կազմակերպված «Ռիսկերի վրա հիմնված վերահսկողություն» թեմայով դասընթաց</p>	<p>ՖԴԿ, ԿԲ այլ ստորաբաժանումների աշխատակիցներ</p>	<p>ապրիլի 18-ից 19-ը</p>
<p>Բունդեսբանկի կողմից կազմակերպված «Վարկային ռիսկի կենտրոնացում, շուկայական և վարկային ռիսկերի փոխազդեցություն» և «Տեղերում ստուգումների ժամանակ վերահսկողների և արտաքին աուդիտորների համագործակցություն» թեմաներով վերապատրաստման</p>	<p>ՖԴԿ, ԿԲ այլ ստորաբաժանումների աշխատակիցներ</p>	<p>մայիսի 7-ից 11-ը</p>



Ծրագիր		
ԵվրԱզԷՍ-ի անդամ երկրների կենտրոնական բանկերի աշխատակիցների մասնագիտական կրթության ծրագրի շրջանակներում «Բանկային համակարգի՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում աշխատանքների կազմակերպման» թեմայով սեմինար	Հայաստանի, Բելառուսի, Լեհաստանի, Ղազախստանի, Ղրղզստանի, Ռուսաստանի և Տաջիկստանի ազգային/կենտրոնական բանկերի ներկայացուցիչներ	հունիսի 5-ից 7-ը
Փորձի փոխանակման այց Կանադայի ՖՀՄ	ՖԴԿ	սեպտեմբերի 4-ից 10-ը
Փորձի փոխանակման այց Ավստրալիայի ՖՀՄ	ՖԴԿ, ԿԲ այլ ստորաբաժանումների աշխատակիցներ	սեպտեմբերի 9-ից 13-ը
ՄԱՆԻՎԱԼ-ի և ԵԱԽ-ի կողմից համատեղ կազմակերպված 2012թ. ՖԱԹՖ-ի նոր հանձնարարականների վերաբերյալ դասընթաց	ՓԼ/ԱՖ դեմ պայքարում ներգրավված գերատեսչությունների աշխատակիցներ	սեպտեմբերի 19-ից 21-ը
Փորձի փոխանակման և համագործակցության ընդլայնման նպատակով այց Միացյալ Թագավորության ՖՀՄ	ՓԼ/ԱՖ դեմ պայքարում ներգրավված գերատեսչությունների աշխատակիցներ	սեպտեմբերի 27-ից 28-ը
Բունդեսբանկի կողմից կազմակերպված «Փողերի լվացման դեմ պայքար» թեմայով վերապատրաստման ծրագիր	ՓԼ/ԱՖ դեմ պայքարում ներգրավված գերատեսչությունների աշխատակիցներ	հոկտեմբերի 21-ից 27-ը
Ռուսաստանի կենտրոնական բանկի կողմից կազմակերպված սեմինար «Բանկային համակարգի կազմակերպումը ՓԼ/ԱՖ դեմ պայքարում. Արժույթային հսկողություն» թեմայով	ԿԲ աշխատակիցներ	նոյեմբերի 19-ից 23-ը



**6.2. Ուսուցողական ծրագրեր և հանդիպումներ հաշվետվություն
տրամադրող անձանց համար**

ԹԵՄԱ	ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ	ԱՄՍԱԹԻՎ
<p>ԱՄՀ տեխնիկական օժանդակության շրջանակներում կազմակերպված ՓԼ/ԱՖ դեմ պայքարի դասընթաց հաշվետվություն տրամադրող ոչ ֆինանսական հաստատությունների համար</p>	<p>Նոտարներ, փաստաբաններ, հաշվապահներ, աուդիտորներ, խաղատներ, թանկարժեք մետաղների դիլերներ, դիելտորներ</p>	<p>նոյեմբեր 21</p>
<p>Ֆինանսաբանկային քոլեջ հիմնադրամի Ֆինանսաբանկային ուսումնական կենտրոնում կազմակերպված «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելումը ֆինանսական հաստատություններում» թեմայով դասընթաց</p>	<p>ՀՀ ֆինանսական հաստատությունների ներքին դիտարկումների (հսկողության) գործառույթն իրականացնող աշխատակիցներ, ներքին աուդիտի անդամներ, հաճախորդների սպասարկում իրականացնող աշխատակիցներ, ՓԼ/ԱՖ ներքին ռիսկերի հետ առնչվող այլ աշխատակիցներ</p>	<p>հոկտեմբերի 8-ից 12-ը</p>



Հավելվածներ

Հավելված 1

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԱՆՁԻՆՔ	2012թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվառված են	2012թ-ի ընթացքում հաշվետվություն տրամադրող անձանց կողմից ՖԴԿ-ին ներկայացված հաշվետվություններ	
		պարտադիր տեղեկացման	կասկածելի
Ֆինանսական հաստատություններ			
բանկեր	22	166500	189
վարկային կազմակերպություններ	32	214	1
արտարժույթի առուվաճառքի գործունեություն իրականացնող անձինք	223	-	-
դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող լիցենզավորված անձինք	5	-	-
ներդրումային ընկերություններ («Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձինք)	9	185	-
«Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ կարգավորվող շուկայի արժեթղթերի կենտրոնացված պահառուն	1	143	2
ապահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) ընկերություններ	9	1700	-
ապահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) միջնորդային գործունեություն իրականացնող անձինք	3	25	-



ապահովագրական գործակալներ	4769	-	-
գրավատներ	93	6	-
Ոչ ֆինանսական հաստատություններ			
դիլիտորական գործունեություն իրականացնող անձինք	144	-	-
նոտարներ	91	823	-
փաստաբաններ, ինչպես նաև իրավաբանական ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերեր և իրավաբանական անձինք	361	-	-
անհատ ձեռնարկատեր հաշվապահներ և հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք	8	-	-
անհատ ձեռնարկատեր աուդիտորներ և աուդիտորական գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք	31	-	-
թանկարժեք մետաղների դիլերներ	-	-	-
թանկարժեք քարերի դիլերներ	12	-	-
արվեստի գործերի դիլերներ	-	-	-
սակարկությունների կազմակերպիչներ	-	-	-
շահումով խաղ և խաղատներ,	61	15	-
վիճակախաղ կազմակերպող անձինք	4	-	-
ինտերնետ շահումով խաղ կազմակերպող անձինք	1	-	-
հավատարմագրային կառավարման և իրավաբանական անձանց գրանցման	-	-	-



ծառայություններ մատուցող անձինք			
վարկային բյուրոներ	-	-	-
անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող լիազորված մարմին (հաշվառված ռեգիստրներ)	122	760	-
ԸՆԴԱՄԵՆԸ		170394	192